Հայ գրականության օլիմպիադա-2017

Մարզային փուլ

XI դասարան (տևողությունը՝ 150ր.)

1.Ի՞նչ շրջասույթ կա Գրիգոր Զոհրապի մասին (1մ.): Ո՞ր գրողների ստեղծագործությունը կարող ես համեմատել Զոհրապի ստեղծագործության հետ (1մ.):

Նկարագրի՛ր Զաբուղոնին՝ ըստ Զոհրապի: Հերքի՛ր կամ հաստատի՛ր նրա գող լինելը (1մ.):

Ինչո՞ւ վրեժխնդիր չի լինում Զաբուղոնը (1մ.): (4մ.)

2.Ի՞նչ շրջասույթներ գիտես Թումանյանի մասին (առնվազն՝ 4) (1մ.):

Կա Մեծարենց, կա Տերյան, և բազում ուրիշ պոետներ կան,

Բայց Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության:

Ո՞վ է ասույթի հեղինակը. բացատրի՛ր Թումանյանի անհաս լինելու գաղտնիքը (1մ.):

Ո՞ր բանաստեղծությամբ է Թումանյանը հաստատում հայրենիքի վերածնման և հավերժության գաղափարը: Գրի՛ր անհրաժեշտ երկտողը (2մ.) : (4մ.)

3.Ո՞ր հեղինակներն են հաստատել լավ գործի անմահության գաղափարը: Գրի՛ր հեղինակների և ստեղծագործությունների վերնագրերը. (1մ.) տարբերակի՛ր ժանրերը (1մ.): Գրի՛ր համապատասխան հատվածները (2մ.): (4մ.)

4.Ո՞վ է «Պարը » բանաստեղծության հեղինակը, ո՞ր ժողովածուում է ամփոփված բանաստեղծությունը (1մ.):
Ի՞նչ տողով է արտահայտվում բանաստեղծի զայրույթը՝ ուղղված քաղաքակիրթ աշխարհին (1մ.):
Արդիակա՞ն է այսօր այդ պոռթկումը (1մ.):
Գրի՛ր շրջասույթ այդ բանաստեղծի մասին (1մ.): (4մ.)

5.Ի՞նչ է նշանակում «Անդաստան » (0,5մ.): Հայոց եկեղեցին ե՞րբ է Անդաստան կատարում (0,5մ.): Ո՞վ է համանուն բանաստեղծության հեղինակը (0,5մ.): Ո՞ր ժողովածուի մեջ է ամփոփված (0,5մ.): Ե՞րբ է լույս տեսել այդ ժողովածուն (0,5մ.): Ո՞րն է հեղինակի անբեկանելի ցանկությունը, որ արտահայտված է բանաստեղծության 4 վեցատողերում (0,5մ.):
Գրի՛ր երկու վեցատող (1մ.):

(4մ.)

Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան